ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԼՈՐԵՏՏԱ ԴԱՆԵՂՅԱՆ

ՀԱՅ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՂԵՐՄՆԵՐԸ

Աղանդավորական շարժումները սկիզբ են առել տակավին քրիստոնեության շեմին (հետագայում ստանալով «գնոստիկյան» անվանումը), իսկ մահմեդական աշխարհում դրանք գոյություն են ունեցել դեռևս նախահիսլամական շրջանում (մանիքեական, մազդաքյան ևն), հիմք ծառայելով մահմեդական աղանդավորական-ապստամբական շարժումներից շատերի համար:

Սեր խնդրո առարկան միջնադարյան աղանդավորական-ապստամբական ժողովրդական շարժումներն են, որոնք այս կամ այն աղանդավորական դրոշի ներքո սոցիալ-տնտեսական, իրավական խնդիրներ են առաջ քաշել և վերաճել հիմնականում հակաֆեոդալական ու հակահիսլամական շարժումների: Ս. Մելիք-Բախշյանի բնութագրմամբ՝ «Միջնադարյան Հայաստանում առաջացած աղանդավորական շարժումները, ըստ էության, դասակարգային հակասությունների հիմքի վրա առաջացած շարժումներ էին»[1]:

Պատմությունն արձանագրել է բազում աղանդավորական շարժումներ: Հիշենք՝ մեսալյան (մեղավորական), թոնդրակյան, պավլիկյան, Մեխլուի, Մուքաննայի, Բաբեքի (քուռամյան), Սուբատ-Մոզի, Աբու-Մուսլիմի, զինջերի, կարմատների, ալավիների, իսմաիլականների և այլ աղանդավորական շարժումները, որոնցից շատերը մեծ տարածում են ունեցել և խոր հետք թողել ժողովուրդների պատմության մեջ:

Ցավոք, այս շարժումների ուսումնասիրությունը դժվարությամբ ու դանդաղ է ընթանում[2], և դա՝ ոչ միայն աղբյուրների սղության պատճառով: Հայտնի է աղանդների նկատմամբ հայ իրականության մեջ եղած խիստ բացասական վերաբերմունքը, որի հետևանքով ոչ միայն եկեղեցական այրերը, այլև պատմիչները, բանաստեղծները, հիշատակագիրները մակդիրներ չեն խնայել՝ նշավակելու աղանդները և նրանց հետ սերտորեն առնչվող

ժողովրդական շարժումները: Միջնադարյան ընկալմամբ աղանդը մինչև ուղնուծուծը դատապարտվել է, այն հերձվածողություն է, շեղում «արքունի պողոտայից», ընդվզում, անջատողականություն, ընդունված սրբություններին հակոտնյա: Նույն որակումները տրվում են աղանդավորական-ապստամբական շարժումներին, թող որ դրանք չարքաշ կյանք վարող աշխատավորական զանգվածների ընդվզում էին աղանդի քողի տակ՝ ընդդեմ իրենց հարստահարողների:

Դիտենք հարցը մահմեդական իրականության մեջ: Նույն պատկերն է: 17-րդ դարի պարսից շահ Աբբաս Սեծի պալատական պատմիչ Իսքանդար Մունշին աղանդավորական շարժման և, ընդհանրապես, որևէ ապստամբության մասնակիցներին անվանում է «աջամեր վա օուբաշ» («հասարակության տականքներ»): Նույն կերպ է բնութագրում 16-րդ դարի պարսից պատմիչ Հասան-բեկ Ռումլուն, օր.՝ 1571թ. Թավրիզի ապստամբության մասնակիցներին, ավելացնելով նաև այլ մակդիրներ ու որակումներ, ինչպես՝ «աջլաֆ» («ստորին խավեր», «ռունդուկ» «թափթփուկներ» և ն): Արաբական աղբյուրները ևս աչքի են ընկնում աղանդավորական շարժումների նկատմամբ արհամարհական արտահայտություններով: Մ. Տամարսյի հաղորդմամբ, Բաբեքի հետևորդները, որոնք ապստամբել էին իշխանությունների դեմ, արաբ պատմիչների կողմից անվանվում էին «անհավաա ջարդարարներ», «ստոր ամբոխ»[3]: Արաբական խալիֆաթի տիրապետության ենթակա տարածքների տարբեր ժողովուրդների աղանդավորական շարժումները միանշանակ ուղղված էին խալիֆաթի դեմ և աներկբայորեն գնահատվում էին իշխանությունների կողմից իբրև անբարո արարք:

Անշուշտ, և՛ հայ, և՛ մահմեդական իրականության մեջ իշխած այս տեսակետներն աղանդավորական շարժման վերաբերյալ որևէ նպաստավոր տեղեկություն չէին կարող թույլ տալ: Ուսումնասիրողին մնում է լրացնել այդ պակասը՝ հետազոտելով աղանդավորների նկատմամբ գոյություն ունեցած հակամարտության պատմությունը, այսպես ասած՝ «թշնամական» տեղեկությունը, որը որոշակիորեն ուշագրավ նյութ է տալիս հետազոտողին:

Աղանդավորական շարժումների պատշաճ ուսումնասիրության խոչընդոտ պատճառներից է նաև տերմինների իմաստների հստակության բացակայությունը, որը, առհասարակ, գիտական շատ հարցերի հետազոտման «աքիլեսյան գարշապարն» է: Գաղտնիք չէ, որ տերմինների կամայական գործածությունը քիչ խառնաշփոթություն չի առաջացրել գիտության մեջ: Այսպես է ստացվել նաև կրոն, աղանդ, կրոնական թև կամ ճյուղ, հոսանք և հարակից բսա-տերմինների հարցում, երբ տարբեր հեղինակների մոտեցումներում միասնություն չկա: Այլ խոսքով խախտվել է «իրերն իրենց անուններով կոչելու» սկզբունքը:

Ոչ պակաս խառնաշփոթ է տիրում աղանդների անվանումների հարցում: Այստեղ պատճառը գլխավորապես աղանդների փոխներթափանցումն ու նրանց միջև կրոնափիլիսոփայական ուսմունքների սերտ կապն է: Սակայն

երբեմն առանձին մանրամասների նույնությունն է դեր խաղացել:[4] Ուստի աղբյուրներում հաճախ կարելի է հանդիպել փաստերի, երբ պավլիկյաններին շփոթում են մանիքեականների հետ, իսկ վերջիններիս՝ 3-րդ դարից հետո ծայր առած մի շարք այլ շարժումների մասնակիցների հետ: Հովհան Օձնեցու մոտ կարդում ենք. «Չպետք է չարաղանդ մծղնեականների, որոնք կոչվում են պավլիկյաններ, օթևանելու տեղ տալ կամ միանալ նրանց...»:[5] Նկատելի է «մծղնեական» (կամ մեսալյան) աղանդի անվան գործածումը որպես հերետիկոսների հավաքական անուն:

Սակայն այս կարևոր հարցի լիարժեք հետազոտումը կասեցնող թիվ առաջին խոչընդոտը, կարծում ենք, պետք է դիտել այն իրողությունը, որ հարցի ուսումնասիրությունը տարվել է մեծ մասամբ միակողմանիորեն, առանց մյուս աղանդավորական շարժումների հետ ունեցած գաղափարական կապերի հետազոտման: Մինչդեռ յուրաքանչյուր աղանդավորական շարժման և սահմանակից երկրներում տեղի ունեցած ժողովրդա-աղանդավորական ապստամբությունների միջև գաղափարական զուգադիպումները բազմաթիվ են: Ուստի և այլ շարժումները պետք է լուսաբանվեն վտխկապակցված:

Նման մոտեցմանն առանձին կարևորություն էր տալիս ակադ. Ա. Հովհաննիսյանը, որին պետք է արժանին մատուցել: «Չեն ուսումնասիրված,- գրում է նա,- կամ վատ են լուսաբանված, մանավանդ, թոնդրակյանների և Հայաստանի սահմանակից կամ պատմականորեն նրա հետ առնչված ժողովուրդների աղանդավորական շարժումների միջև եղած կապերը»:[6]

Նույնը կարելի է ասել մահմեդական, բյուզանդական և այլ աղանդավորական շարժումների հետազոտման մասին, որոնք, անտարակույս, չէին կարող զերծ մնալ ըմբոստության «թափառող» ալիքներից: Թե որքան վարակիչ էին աղանդավորական շարժումները և ինչ արագությամբ էին նրանք տարածվում շրջակա երկրներ, դիպուկ է 9-րդ դարում Բյուզանդիայում բռնկված՝ Թովմա Գազիրացու ապստամբության (820-824) օրինակը, որից տպավորված՝ Բյուզանդիայի Միքայել 2-րդ կայսրը գրում էր, թե ճարակելով կայսրությանը սահմանակից արևելյան երկրները, այդ ապստամբությունն ընդգրկել է իբերներին, հայերին, աբխազներին և ուրիշ ժողովուրդների: Իսկ հույն պատմիչ Գենեզիոսը նույն ապստամբության մասին հաղորդում է. «Ոչ ոք անհաղորդ չէր մնում նրան՝ ո՛չ արևելքից, ո՛չ արևմուտքից, ո՛չ օտար ցեղերից, ո՛չ տեղացիներից, ո՛չ հարևաններից...»:[7]

Կասկածից վեր է, որ նման ազդեցիկ շարժումները չեն կարող ուսումնասիրվել մեկուսի: Եզրահանգումը մեկն է. աղանդավորական շարժումների միջև կապերը պետք է դառնան հատուկ ուսումնասիրման առարկա:

Բովանդակությամբ պետք է նշել, որ աղանդավորական շարժումների հետազոտումն արդեն իսկ երևակել է այդ շարժումների միջև բազմաթիվ ընդհանրությունների առկայության փաստը և՛ ժամանակի, և՛ տարածության մեջ, նաև այն իրողությունը, որ շարժումները երբեմն այն աստիճան «շարժուն» են եղել, որ նրանցից ոչ բոլորի ծննդավայրը հստակորեն կարելի է ո-

ռոշել, մյուս կողմից, միևնույն շարժումը, օր.՝ մանիքեությունը (3-րդ դ.). որը «շրջել է» Պարսկաստանում, Հայաստանում, Վրաստանում, Չինաստանում, Հնդկաստանում և այլուր, կարելի է վերագրել մի քանի ժողովուրդների, քանի որ յուրաքանչյուր երկրում, որտեղով խորշակի պես անցել է շարժումը, խմորումներ է առաջացրել և որոշակի հետք է թողել նրանց ժողովուրդների պատմության մեջ:

Ի մոտ ծանոթությունն աղանդավորական շարժումներին՝ գնոստիկյան և նախաիսլամական շրջանից սկսած մինչև ուշ միջնադար, թույլ է տալիս վստահորեն խոսելու հայ և մահմեդական միջնադարյան աղանդավորական շարժումների վտխներթափանցիկ լինելու մասին՝ նրանց գաղափարախոսությունից մինչև կազմակերպչական և այլ մանրամասներ:

Մեզ համար, անշուշտ, առանձին հետաքրքրություն են ներկայացնում գաղափարամերձության այն դրսևորումները, երբ աղանդավորական շարժումն իր շուրջն է համախմբել տարակրոն հասարակական շերտերի, մասնավորապես՝ հայ և մահմեդական: Դրա ցայտուն օրինակն է հայ իրականության մեջ հանդես եկած, այսպես կոչված՝ Մեխլուի շարժումը[8], որը ծավալվեց 17-րդ դարի սկզբին՝ իբրև արձագանք այդ շրջանում տարածում գտած եկեղեցական-վանական քստմնելի բարքերի:

Աղբյուրները (Ա. Դավրիժեցի, Գր. Դաբանաղցի, բազում ձեռագրերի հիշատակարաններ, ժամանակագրություններ ևն) միաբերան վկայում են, որ 15-17-րդ դդ. Հայաստանում վանական բարքերի անկում էր տիրում: Հայ եկեղեցականների բարոյալքումը, ձգտումը շվայտ կյանքի, եպիսկոպոսների, քահանաների ձեռնադրումն «արծաթով», համատարած կաշառքը, եկեղեցու վերածումը վաճառանոցի, այլ խոսքով՝ եկեղեցուն անհարիր մթնոլորտի առկայությունը ստիպում էր կաթողիկոսներին ժամանակ առ ժամանակ որոշակի միջոցներ ձեռնարկել՝ կարգի հրավիրելու օրինազանց եկեղեցականներին:[9] Այս մթնոլորտը ներառում էր նաև վանականների սեփականատիրական ձգտումները, մասնավորապես՝ եկեղեցական հալատիրության աճը և վանական կալվածատիրության ծնած հետևանքները, որ առանձնապես վնասակար անդրադարձում էր ունենում եկեղեցուն ենթակա հոտի, բնակչության ճնշվող ու շահագործվող աշխատավոր խավի տնտեսական վիճակի վրա: Այսպիսով, բարձրանում էր վերջիններիս դժգոհության ալիքը, և հաճախ վտքքիկ առիթը լցնում էր համբերության բաժակը՝ ծնունդ տալով ժողովրդական հուզումների, որոնց ամենաընդունված ձևը աղանդավորական-ապստամբական շարժումն էր:

Ահա այսպիսի ժողովրդական ըմբոստության պոռթկումներից էր Մեխլուի շարժումը:[10] Մեխլուն[11] բնիկ գանձակեցի էր և Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի հավանությամբ ստացել էր ավագ սարկավագի հոգևոր կոչում: Վերը նկարագրված վանական մթնոլորտը Մեխլուի վրա բացասական ներգործություն է ունենում և հակակրանք ծնում հանդեպ հոգևոր դասը, որի դեմ էլ նա սկսում է քարոզել, շրջագայելով նախ Աղվանից աշխարհում, ապա

Գեղամա գավառում և շրջակա վայրերում: Անշուշտ, այս վարքագիծը չէր կարող անհետևանք մնալ, ուստի նա գրկվում է վեղարից և ի վերջո հալածվում ինչպես կաթողիկոսի, այնպես և խանի կողմից: Մակայն դրա փոխարեն Սեխլուի շուրջը համախմբվում են մեծաթիվ հետևորդներ, որոնց ոգևորում էին նրա գաղափարները՝ վանական կեղեքումների դեմ, ի պաշտպանություն չքավոր աշխատավորական զանգվածին: Սեխլուին արձագանքում էին վանական կալվածքներում շահագործվող գյուղացիները, որոնց մեջ կային և՛ հայեր, և՛ աղրբեջանցիներ: ԵՎ նրանց թիվը գնալով աճեց այնքան, որ շաժմանը ժամանակակից Գր. Դարանաղցու պատկերմամբ՝ «մորեխակոյտ» էին հիշեցնում: Իսկ Զաքարիա Մարկավագի խոսքերով՝ նրանց թիվն ավելի քան հինգ հարյուր էր («զԾ»): Սեխլուի գաղափարական հիմքում ուշագրավն այն էր, որ նա խտրություն չէր դնում կրոնների միջև, Քրիստոսի ու Մահմեդի միջև, և նրան հետևում էին ինչպես քրիստոնյաներ, այնպես և մահմեդականներ: «Եւ այսպէս տարածեցաւ խաբեբա անունը նորա ի մէջ Տաճկաց և Քրիստոնէից»- պատմում է Զաքարիա Մարկավագը:[12] Սեխլուին հարում էին նաև այլ եկեղեցականներ, որոնք նույնպես դժգոհ էին վանական կեղեքումներից: «Գոռեհիկ աշխարհականք և ռամիկք, այլ և տգետք երիցունք, և փարթամ և մեծազգի մարդիկք»- այսպես է թվարկում Զաքարիա պատմիչը շարժման մասնակիցների խմբերը, որից ակնհայտ է, որ Սեխլուին սատարում էին նաև հասարակության վերնախավից:[13] Պետք է ենթադրել, որ վերջիններս հենց այն ջուղայեցիներն էին, որոնց մասին Գր. Դարանաղցին վկայում է իբրև Սեխլուին աջակցողների (հիշենք՝ 17-րդ դ. ջուղայեցիների ընչեղ ապրելակերպը հանրահայտ փաստ է):

Սեխլուի գայրույթը հարուցում էին հատկապես աբեղաները, որոնց նա անվանում էր «շնացողք և պիղծ»: Դառնալով նրանց հալածիչը, Սեխլուն իր զինված ջոկատին հրահանգում էր բռնագրավել նրանց գույքը, սեփականությունը և որտեղ աբեղա էր տեսնում, «մերկացուցանէր և բրածեծ առնէր»:

Սեխլուի գաղափարախոսության համար աղբյուր էր «գիրք մի ժողովածու», որը վկայակոչելով նա քարոզում էր հոգևորականների արժանավայել վարքագծի պահանջները, օր.՝ որ հոգևորականները չպետք է ստանան ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ: Բռնագրավելով հոգևորականների ունեցվածքը, Սեխլուն, փաստորեն, իրականացնում էր աղանդավորական-ապստամբական շարժումներից շատերին բնորոշ՝ ունևորների սեփականազրկման պահանջը: Եվ քանի որ շահագործման դեմ պայքարը զոհացնում էր նույն շահագործման բեռի տակ կքած և՛ հային, և՛ մահմեդականին, նրանք միավորվում էին այս շարժման մեջ նպատակի միասնությամբ:

Սեխլուի շարժումը չէր կարող, սակայն, գլոբալ խնդիրներ լուծել և կամ ուղղվել Մեֆյան հարստության դեմ, ինչպես գտնում պատմաբան Պ. Հարությունյանը:[14]

Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ զոջալով իր արարքների համար, Սեխլուն իր մեղքերը քավելու նպատակով ի վերջո ուղևորվում է Ե-

բուսալեմ: Սա չի՞ վկայում այն մասին, որ նա մնաց իր կրոնին հավատարիմ քրիստոնյա և միայն հոգևորական հարստահարիչների դեմ էր ընդվզել:

Արդ, Սեխլուի շարժումը, որը մեզանում մեծ մասամբ դիտվում է իբրև եկեղեցուց խորտակված գործունեություն, իրականում միավորել էր աստրակրոն և սոցիալապես տարբեր հասարակական շերտեր, որոնց հուզողը, կարելի է ասել, ամենևին էլ կրոնը չէր, այլ սոցիալական անարդարության, շահագործման հարկերի ծանրության այն մթնոլորտը, որի «հեղինակները» տվյալ դեպքում եկեղեցական վեղար կրող ֆեոդալներն էին ու նրանց կամակատարները:

Կրոնների համերաշխության նմանատիպ գաղափարախոսությունը հատուկ է եղել այլ շարժումների ևս: Ակադ. Ա. Հովհաննիսյանի հետևողական պրպտումների շնորհիվ իրազեկ ենք դառնում Սեխլուի շարժման և նրան ժամանակակիցծ առաջավորասիական աղանդավորական շարժումների զուգադիպության փաստերին: Այսպես, 1415-1420թթ. Թուրքիայում բռնկվել է գյուղացիական ապստամբություն Բեդր-էդ-դին Սիմսվի շեյխի գլխավորությամբ, որը կրոնների համերաշխության կողմնակից էր և եղբայրություն էր քարոզում իսլամական, քրիստոնեական և մովսիսական կրոնների միջև: Ուստի և Թուրքիայի տարբեր վիլայեթների տարակրոն գյուղացիները ի նշան սուլթանական դաժան դրվածքների և տեղական ֆեոդալների կամայականությունների դեմ իրենց բողոքի, միավորվեցին Սիմավի շեյխի շուրջը: Նրանց պահանջների կարևոր կետերն էին՝ ունևորների սեփականազրկում, բնության բարիքների համայնացում:[15] Սիմավի շեյխի աշակերտը՝ Մուստաֆան, իրեն հռչակել էր մարգարե և մեծ քանակությամբ համախոհների մեջ առանձնապես մտերմություն էր հաստատել հրեաների և հայերի հետ, իսկ վերջիններս նրա քարոզները տարածում էին Թուրքիայի քրիստոնյաների մեջ, ընդվզումի սերմեր ցանելով նրանց շրջանում:[16]

Մահմեդական աղանդավորների մեջ գոյություն ուներ «իսլամը ցեղային խտրանք չի ճանաչում» կարգախոսը, որից օգտվում էին շատ դեպքերում՝ արտահայտելու համար խալիֆաթի ճնշված ժողովուրդների ազատագրական տենչը: 776թ. Մահերաննահրում՝ Միջին Ասիայում և նրան կից Խորասանում բռնկված հուժկու ապստամբության ղեկավարը՝ Մուքաննան[17] (կամ Աքան), իրեն հայտարարում էր մերթ մարմնացած աստվածություն, մերթ Քրիստոսի կամ Մահմեդի և կամ Աբու-Մուսլիմի հաջորդ:[18] Պարսկական աղբյուրները վկայում են, որ Մուքաննան մեծ ժողովրդականություն էր վայելում, և նրան երկար ժամանակ կարողացել են թաքցնել այնպես, որ խալիֆաթն անկարող է եղել գտնել նրան: Միայն մեծ դժվարություններից հետո 783թ. ապստամբությունը ճնշվեց, իսկ Մուքաննան ինքնասպան եղավ: Ուշադրության է արժանի, որ Մուքաննայի գաղափարախոսության հիմքում ընկած էր Մազդաքի ուսմունքը, ասել է թե՝ շարժման կողմնակիցները հետևում էին Մազդաքի ստեղծած կրոնա-բարոյական նորմերին: Անդրադառնանք այդ շարժմանը:

Մազդաքյան շարժումն առաջացել է 6-րդ դարում Պարսկաստանում. իր գաղափարախոսության հիմքում ուներ գույքի հավասարության, տղամարդկանց հետ կանանց իրավահավասարության սկզբունքները: Շարժումը հենց սկզբից իր մեծաթիվ կողմնակիցների ելակետը համարում էր կրոնական բարեպաշտությունը և Աստծո կամքը: Նրա ուսմունքի կրոնական հիմքերի արտահայտությունն են եղել մի շարք պատվիրաններ, ինչպես՝ միս ուտելու և արյունահեղության արգելքը:[19] Ի դեպ, վերջին պատվիրանն ուխտադրժորեն չի կիրառվել այն դեպքերում, երբ հաշվեհարդար էին տեսնում իրենց աղանդի հակառակորդների հետ: Իսկ հաշվեհարդարը պարտադիր սկզբունք էր, քանի որ, ըստ Մազդաքի, հասարակությունը բաժանվում էր երկու խմբի՝ «ճշմարիտ հավատքի հետևորդներ» (իմա՝ Մազդաքյաններ) և նրա թշնամիներ: Վերջիններիս ոչնչացնելու ծրագիրը անհրաժեշտ էր, մասնավորապես, ազնվականության դեմ պայքարում, որը զգալի խոչընդոտ էր նրանց շարժման ճանապարհին և որն ի վերջո դարձավ շարժման գլխավոր զոհը: Սասանյան Կավադ 1-ին թագավորը ևս իր հաշիվներն ուներ ազնվականության հետ և այս հարցում պատրաստ էր անգամ համագործակցել Մազդաքի հետ: Սակայն, երբ սասանված էին ազնվականության դիրքերը (նրա զգալի մասը պարզապես ոչնչացված էր), Կավադը, որ հասցրել էր բարձր պաշտոններ տալ Մազդաքին ու նրա հետևորդներին, կտրականապես վտխեց իր դիրքորոշումը՝ շրջվելով և երես թեքելով Մազդաքյաններից: Դա անխուսափելի էր, քանի որ մազդաքյան սկզբունքներն ուղղված էին պետության սոցիալական հիմքերի դեմ: Հետևանքը եղավ ոչ միայն բոլոր մազդաքյանների պաշտոնազրկումը, այլև նրանց անխնա հալածանքը, որը շարունակվեց նաև Մազդաքի տանջամահ արվելուց և շարժման ընդհատակ անցնելուց հետո:

Մազդաքյան շարժումը գաղափարամերձության ակնառու օրինակներ է տալիս և՛ նախաիսլամական մյուս (մանիքեություն), և՛ մահմեդական (Աբու-Մուսլիմ, Սումբաթ-մոգ, Մուքաննա ևն) ալանդավորական շարժումների հետ: Մազդաքյան գաղափարական արձագանքները նկատելի են նաև թոնդրակյան շարժման մեջ, մասնավորապես՝ հանուն գույքային հավասարության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, ընդդեմ բռնության ու ժողովրդի կեղեքման կոչերով:

Նկատենք՝ ուշ միջնադարի հայկական միջավայրում ծագած Մեխլուի շարժման կրոնների համերաշխության գաղափարը գտանք 15-րդ դ. Թուրքիայում գործած Սիմավի շեյխի քարոզչության մեջ, նույն գաղափարը տեսանք Մուքաննայի մարմնավորումների շարքում: Նույն Մուքաննան, ինչպես տեսանք, հետևում է Մազդաքի գաղափարներին, որոնց արձագանքը նկատելի է նաև թոնդրակյան շարժման մեջ, իսկ Մազդաքի համար ուղեկից է եղել մի քանի երկրներ հուզած Մանին, որից սնվեցին մեծ թվով աղանդավորական շարժումներ, այդ թվում և՝ պավլիկյան: Այս սիստեմատիկ դիտարկումները կարելի է շարունակել: Անդրադառնանք թվարկված շարքի մյուս աղանդավորական շարժումներին:

Նախ՝ մանիքեության մասին:

Երկասավածության (դուալիզմի) սկզբունքի վրա էր հենվում նախախլամական խոշորագույն աղանդներից մանիքեությունը, որի դրոշի տակ ծավալված շարժումը տևեց գրեթե մեկ հազարամյակ:[26] Սկիզբ առնելով 3-րդ դարում Իրանում՝, այս աղանդավորական շարժումն իր ժողովրդամետ գաղափարախոսությամբ կարճ ժամանակում բազում համակիրներ նվաճեց: Շարժման հիմնական գաղափարը երկու հակադիր ուժերի՝ բարու և չարի, լույսի և խավարի գոյության ընդունումն էր: Սակայն ի տարբերություն զրադաշտականության, որը գոյություն ունեցած աշխարհը և իրավակարգն ընդունում էր որպես համայն լուսավորություն, ըստ Մանիի՝ գոյություն ունեցած կյանքը և մարդիկ չար ստեղծագործություն են. մարդն իր ողջ կյանքի ընթացքում պարտավոր է օգնել լուսավոր ուժին՝ պայքարելու չարի դեմ: Իսկ փրկությունը, ըստ Մանիի, հնարավոր է՝ ազատելով մարդու հոգին երկրային, նյութական ձգտումներից: Եվ այս բոլորին հասնելու համար մարդը պետք է խստորեն հետևի սահմանված բարքերին, մասնավորապես՝ բարոյական կյանք վարի, իսկ ընտրյալների համար առաջադրվում էր ժուժկալության առավել խիստ շրջանակ՝ արգելվում էր ամուսնանալ, մսեղեն գործածել, բույսեր քաղել:

Դժվար չէ նկատել, որ մանիքեական ուսմունքը հարստության ու շվայտության նկատմամբ արհամարհանքով հակադրվում էր շահագործող դասին ու իշխանությանը: Վաղ ֆեոդալիզմի շրջանն Իրանում, որ բնութագրվում էր ստրկատիրության մնացուկներով, սոցիալական անհավասարության և դասակարգային հակասությունների սրմամբ, չէր կարող չստաջացնել հասարակության ստորին շերտերի ատելությունը ճնշող ազատների նկատմամբ, ուստի և հարստահարվող ժողովրդական լայն զանգվածների համար մանիքեությունը փնտրված աղանդ էր՝ նյութական կյանքը մերժող գաղափարախոսությամբ: Սակայն միայն այսքանը. նյութական կյանքի բացասումը գագաթնակետն էր այն պահանջների, որ ընդունակ էին առաջադրել մանիքեականները. հետևաբար և խոսք չէր կարող լինել հասարակության վերավախման կամ, թեկուզ, գինված ապստամբության մասին:

Մանիքեության արագընթաց տարածումը (Իրանից Հայաստան, Բյուզանդիա, Միջին Ասիա, Չինաստան ևն) ուղիղ համեմատական էր նրա դեմ տարվող հալածանքներին, որոնց սկիզբը դրեց Ասասանյան պետական մեքենան: Որքան էլ պասիվ էր մանիքեության բողոքը և որքան հեռու էր շարժումը հեղավախական լիցքից, նրա նկատմամբ սկզբնական շրջանում նույնիսկ անտարբեր պարսից արքունիքն ի վերջո դատապարտեց շարժումը՝ նրա նիհիլիստական քարոզի մեջ գտնելով հակապետական միտում: Հետևանքն էր Մանիի մահապատիժը 276 թ. և նրա հետևորդների անցումն ընդհատակ: Դրանից հետո էլ, սակայն, չէր նվազում շարժման ազդեցությունը հասարակական կյանքի վրա, որով և պայմանավորվեց մանիքեության երկարակեցությունը:

Պակաս դաժան հետապնդումների չենթարկվեցին նրանք Բյուզանդիայում, որտեղ նույնպես ստիպված էին ընդհատակ անցնել կամ հեռանալ: Հալածանքը տարվում էր նաև նրանով, որ ստեղծվեց այդ աղանդը դատապարտող ստվար գրականություն: Ի դեպ, մանիքեականները ևս ունեցել են գրականությունը, ընդ որում, նրանք տիրապետել են գիրքը գեղարվեստորեն ձևավորելու արվեստին: Վկայակոչելով Իբն-ալ-Ջաուզիին, Ադամ Մեցն իր «Մուսուլմանական վերածնունդ» գրքում գրում է. «Մանիքեական սուրբ գրքերը ևս շքեղ ձևավորված էին»:[23] Նույն հեղինակի հաղորդմամբ՝ 923 թ. Բաղդադի պալատի «հասարակական դարպասների» մոտ հրի մատնվեցին Մանիի պատկերը և 14 պարկ հերետիկոսական գրքեր, և «խարույկից հոտում էր հալված ոսկի և արծաթ»:[24]

Մանիքեությունն անժխտելի հետք թողեց հետագայի աղանդավորական շարժումների վրա, ինչպես՝ թոնդրակյան (Հայաստանում), ալբիգոյցիների (Եվրոպայում), բոգոմիլների (Բուլղարիայում) ևն: Որոշ աղանդներ, (օր.՝ մազդաքյան) հաճախ կոչել են Մանիի անվամբ՝ ելնելով նրանց գաղափարական կամ այլ նմանությունից: Ուշագրավ են մանիքեության որոշ պահանջների (բարոյական կյանքի մասին ևն) գաղափարական աղերսները քրիստոնեական պատվիրանների հետ: Մանիի ուսմունքին գաղափարամերձ են, մասնավորապես, Մեբաստացիների և պավլիկյանների աղանդները, որոնք նույնպես ընդունում էին բարի և չար աստվածների գոյությունը: «Եղծ աղանդոց» աշխատության երկրորդ՝ «Պարսից կրոնի հերքումը» գրքում Եզնիկ Կողբացին տալիս է Մանիի հայացքների և նրան մոբթագերծ արած զրադաշտականների գաղափարախոսության համեմատական բնութագիրը, եզրակացնելով, որ նրանք միայն վարքով են միմյանցից տարբերվում, իսկ «կրոնով երկուսն էլ մեկ են, նրանք երկարմատյաններ են[25], սրանք՝ նույնպես. նրանք արևապաշտներ են, սրանք՝ արեգակի ծառաներ. նրանք կարծում են թե բոլոր անշունչները շունչ ունեն, սրանք էլ նույն ձևով (նույնն) են հասկանում»:[26] Կողբացին նշում է նաև այլ աղանդների հետ մանիքեության սկզբունքների նույնության մասին (օր.՝ ամուսնությունը պղծություն են համարել նաև մեսալյանները, Մարկիոնը և այլք): Ե. Տեր-Սինասյանը մանիքեությունն անվանում է նաև «վերանորոգված մի իրականություն», քանի որ մանիքեության առջև «ուղիղ արդեն հարթել էր Սիհրի կրոնը»:[27] Այս մեկնաբանությունն ուղղակիորեն խոսում է աղանդների գաղափարական կապերի հարցում հաջորդականության թեզի օգտին (այդ մասին՝ ստորև):

7-րդ դարում Արևմտյան Հայաստանում ծայր առավ Պավլիկյան աղանդավորական շարժումը, որ տարածում գտավ նաև Արևելյան Հայաստանում և գրեթե երեք հարյուրամյակում այնպիսի չափեր ընդունեց, որ դարձավ միջնադարյան հակաֆեոդալական շարժումներից ամենազորեղը ոչ միայն Հայաստանում, այլև՝ Բյուզանդիայում:[28] Շարժումը հետևանք էր 5-րդ դ. Բյուզանդիայի կողմից սկսված և աստիճանաբար ուժեղացած քաղաքական ու տնտեսական ճնշումների, որոնք գործադրվում էին ինչպես հայ նախա-

բարությունների, այնպես և աշխատավոր խավերի նկատմամբ:

Պավլիկյանների գաղափարախոսությունը, թեև «բազմաճյուղ» էր,[29] բայց հիմքում ուներ երկաստվածության սկզբունքը՝ բարի և չար աստվածների գոյության ընդունումը:[30] Բարի (այն է՝ երկնային) աստծո արարչագործությունն էին համարում արեգակը և մարդկային հոգին, իսկ չարի ստեղծագործությունը՝ մարդու մարմինը և աշխարհում հաստատված ամեն տեսակ անօրինականությունը, ճնշումը, կեղեքումը անարդարությունը, սոցիալական անհավասարությունը: Ուստի պավլիկյանների գլխավոր նպատակն էր պայքարել այդ բոլոր չարիքների դեմ, դրանով իսկ մոտեցնելով այն երանելի ժամանակը, երբ բարի Աստվածը կիշխի այս աշխարհում:

Դժվար չէ կրոնական քողի տակ նկատել պավլիկյան աղանդի աշխարհիկ, դասակարգային բնույթը: Եվ սրա խոսուն փաստերից է աղանդավորների վերաբերմունքը վանականների նկատմամբ: Քանի որ հոգևորականությունը 5-րդ դ. նույնպես իր կոչմանն անհարիր կենցաղ էր վարում[31], իր վարքագծով գալիս էր բորբոքելու հարկերից ու իրավազուրկ վիճակից կքած հայ աշխատավորական զանգվածների դժգոհությունն ու զայրույթը: Վանականների, իբրև շահագործողների, նկատմամբ ատելությունից բխում էր մերժողական վերաբերմունքը եկեղեցու նկատմամբ, թեև պավլիկյաններն անվերապահորեն ընդունում էին Քրիստոսին, համարելով նրան երկնային (այսինքն բարի) Աստծո որդի, ինչպես նաև նրա հրեշտակը:

Արդ, ակնհայտ են պավլիկյանների գաղափարական աղերսները այլ շարժումների հետ. հոգևորականների դեմ ըմբոստության և պայքարի գաղափարը, որ ողջ միջնադարի ընթացքում զգալ է տվել իրեն, մենք արդեն հանդիպեցինք Սեխլուի և Սիմավի շեյխի շարժումների անդրադարձներում: Ինչ վերաբերում է երկաստվածության գաղափարին, ապա այն հատուկ է եղել նաև մանիքեությանը, Մուքաննայի, Բաբեքի շարժումներին:

Ի դեպ, Բաբեքի աղանդավորական շարժումն առանձնապես նշելի է, քանի որ այն հիմք է տալիս խոսելու ոչ միայն գաղափարական աղերսների, այլև հայոց հետ նրա զինակցության մասին: Անդրկովկասում արաբ զորախմբերը, որոնք ջանում էին ճնշել Աղվանից և Սյունյաց ֆեոդալների՝ Սահլ իբն Ամբաթի և Վասակի ապստամբությունը, պարտության են մատնվում Բաբեքի զինակցության հետևանքով:[32] Հզոր ու տևական այս աղանդավորական ապստամբությունը սկիզբ առավ Ատրպատականում և արագ տարածվեց հարևան երկրներում, ցնցելով խալիֆաթը: Բաբեքը որդեգրել էր քուռամյանների[33] գաղափարախոսությունը, որոնց վրա խոր ազդեցություն էր ունեցել Մազդաքի շարժումը: Նրանք հետևում էին կրոնական հանդուրժողականության, բնության բարիքների օգտագործման հավասարության, հասարակության մեջ կնոջ իրավազորության գաղափարներին: Քուռամյանների հայացքները դեմ էին իսլամի սկզբունքներին, միաժամանակ՝ խալիֆաթին: Բաբեքի ապստամբությանը մասնակցում էին ոչ միայն գյուղացիներն ու արհեստավորները, այլև՝ խալիֆաթից դժգոհ ֆեոդալները: Շարժու-

մը համակրանք էր գտնում տարբեր ժողովուրդների, այդ թվում և՝ հայերի կողմից: Երբ Բաբեքի ռազմական տևական հաջողություններին հաջորդում է տեղատվությունը, և երբ խալիֆ Մութասիքը բոլոր ուժերը կենտրոնացնելով, ստիպում է Բաբեքին շարունակ նահանջել, վերջինս փախուստի է դիմում Հայաստան: Այստեղ Բաբեքի նկատմամբ համակիրների մեծ թիվն արդյունք էր արաբ իշխողների նկատմամբ հայ ժողովրդի ընդերքում գոյություն ունեցած մեծ ընդդիմության, և մեկ անգամ չէ, որ ըմբոստության ալիքն ավարտվել է ապստամբությամբ: Խալիֆաթի դեմ Բաբեքի գինված ուժերի կարիքն զգում էր հայ ֆեոդալական վերնախավը, որը ժամանակավորապես օգտագործելով Բաբեքի զինուժը, վերջինիս թուլացման հետ դավաճանեց նրան, և վերոհիշյալ նույն Սահլ Իբն Սմբաթը 837թ. կալանեց Բաբեքին և հանձնեց խալիֆաթին: Բաբեքի սպանությունից հետո դեռ երկար շարունակվեց հսկայական ժողովրդականություն վայելող այս շարժման մասնակիցների և խալիֆաթի միջև դաժան ու համառ «երկխոսությունը», որի ընթացքում մահապատժի ենթարկվեցին մեծ թվով քուռամյաններ: Ավելի քան երկու տասնամյակ խալիֆաթի տարածքներն ալեկոծած այդ շարժումը ճնշվեց, սակայն նրա թողած ազդեցությունը հարատևեց, ամենից առաջ, նրանով, որ սնեց ժողովրդական լայն զանգվածների կենսահայեցողությունը, էլ ավելի ամրապնդելով դիմադրական շարժման գաղափարը և իր ավանդը բերելով Արևելքի շատ ժողովուրդների ազատագրական պայքարի ձևավորման գործին:

Ուշադրության արժանի է նաև 9-11-րդ դդ. Հայաստանում ասպարեզ իջած թոնդրակյան աղանդավորական շարժումը (Ա. Հովհաննիսյանի արտահայտությամբ՝ «հեղափոխական ընդդիմություն»): Թոնդրակյանները մերժում էին քրիստոնեական եկեղեցու նվիրապետությունը, նրա խորհուրդները, ծիսակատարությունները, խաչապաշտությունը: Թոնդրակյանների աղանդապետը՝ Զարեհավանցին, Քրիստոսին համարում էր սոսկ «մարգարե», այսինքն գտնում էր նույնը, ինչ՝ իսլամը: Չէ՞ որ Ղորանի մեղինյան սուրաներում Հիսուսը ներկայացված է որպես մարգարե, որն անչափելիորեն ավելի բարձր է, քան հին հրեական աստվածաշնչական մարգարեները:[34] Թոնդրակյանները պահանջում էին կանանց և տղամարդկանց իրավահավասարություն, ժխտում էին հանդերձյալ կյանքի և հոգու անմահության գաղափարը, մարդու փրկությունը որոնում էին այս կյանքում, կոչ էին անում, որ վերացվեն ամեն բռնություն, անիրավություն, կեղեքում: Եվ այդ բոլորը՝ առանց եկեղեցու միջնորդության կամ ֆեոդալ իշխանության օգնության: Ակնհայտ է շարժման դասակարգային ուղղվածությունը, հակաֆեոդալական բնույթը:

Իրենց տնտեսական ու իրավական պահանջներով թոնդրակյան շարժմանը հար և նման էին այլ շարժումներ և՛ հայ, և՛ մահմեդական իրականության մեջ, ինչպես պավլիկյան, մեսալյան (մծղնեական), Բաբեքի, Մուքանների, Մազդաքի ևն:

Առանց շարունակելու անդրադարձը յուրաքանչյուր շարժմանն առանձին, վարձենք ամփոփել աղանդավորական շարժումների գաղափարական աղերսների դիտարկումը՝ խմբավորելով դրանք առանձին հարցերի շուրջ:

Հայ և մահմեդական աղանդավորների գաղափարամերձությունը դրսևորվել է դավանաբանական, սոցիալ-տնտեսական, իրավական ոլորտներում: Նշելի է հատկապես սոցիալական անհավասարության մերժումը, որից բխում էին և գույքի, հարստության ժխտումը կամ սրանց հավասար բաժանման պահանջը: Այս թեզը մասամբ իրագործվում էր համայնքների ստեղծմամբ (ինչպես՝ Սեբաստիայի «հերետիկոսական» համայնքները (4-րդ դ.)), որոնց տնտեսական հիմքը գույքային հավասարությունն էր, ասել է թե՝ մասնավոր սեփականությունից հրաժարումը:[5] Գործադրվում էին նաև առավել արմատական քայլեր, բնակչության ընչազուրկ շերտերը ոտքի էին ելնում և աղանդավորական շարժումը վերածում տնտեսական ու իրավական պահանջները հետապնդող պայքարի: Ունևորների սեփականազրկման, գույքի բռնագրավման գործողությունները հատուկ են եղել և՛ մահմեդական, և՛ հայ շատ աղանդավորական շարժումների (թոնդրակյան, պավլիկյան, Բաբեքի, Մուքաննայի, Սիմավիի, Մազդաքի, Քուֆայի[36] ևն): Այս սկզբունքի ավելի չափավոր կերպն էր արհամարհանքը հարստության նկատմամբ (օր.՝ մանիքեականների կաղմից): Հավասարության պահանջների մեջ առանձին տեղ ուներ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցը, որ առաջ էին քաշում թոնդրակյանները, Բաբեքը, Մազդաքը ևն:

Կրոնական հանդուրժողականությունը և տարազգի աղանդավորների միավորումն այս կամ այն աղանդավորական շարժման մեջ հանդիպում ենք Սեխլուի (Հայաստանում), Սիմավիի (Թուրքիայում), քառամյանների (Իրանում), Մուքաննայի (Միջին Ասիա, Խորասան) զանգվածային շարժումների պատմության մեջ:

Դավանաբանական հարցերում գաղափարամերձության օրինակներից է և երկաստվածության (դուալիզմի) ընդունումը, որ առկա էր դեռևս զրադաշտականների մոտ և ժամանակ առ ժամանակ ի հայտ է եկել միջնադարի ընթացքում Եվստաթիոսի ղեկավարած Սեբաստացի «հերետիկոսների», պավլիկյանների, Սանիի, Բաբեքի, Մուքաննայի աղանդավորական շարժումների գաղափարախոսությունների մեջ:

Ընդհանուր ճանաչում է գտել նաև հոգու վտխանցման և մեսիանիզմի գաղափարը, որ դարերով կենսունակություն էր պահպանում տարբեր ժողովուրդների մոտ (նշենք թոնդրակյաններին, քառամյաններին ևն) և հարատև է ցարդ:

Ճգնակեցության (ասկետիզմի) տարբեր դրսևորումները, որոնցով արգելվում էին մսակերությունը, ամուսնությունը, բույսեր քաղելը ևն, այս կամ այն չափով հատուկ են եղել մանիքեությանը, մազդաքյաններին, մծղնեականներին ևն: Վերջիններս առավել անհանդուրժող են եղել ամուսնության նկատմամբ և այն պղծություն են համարել: Եզնիկ Կողբացու դիտարկմամբ՝

նույնն են քարոզել Մանին, Զրադաշտը, Մարկիոնը: Սեբաստացի «հերետիկոսները» ևս մերժում էին ընտանիքը:

Ավելորդ ենք համարում կանգ առնել դարերով վախանցված զուտ արտաքին ընդօրինակումների վրա (որոշ աղանդապետների սպիտակ հագուստը, դիմածածկումը, 12 թվի սրբացումը ևն):

Համառոտակի անդրադառնանք այն հանգամանքներին, որոնցով պայմանավորված էր հայ և մահմեդական աղանդավորական շարժումների միջև որոշակի աղերսների առաջացումը: Այս հարցը դիտարկելիս առաջին հերթին աչքի է զարնում շարժումների դրդապատճառների, ասել է թե՝ «հարուցիչների» նույնությունը կամ նմանությունը: Արաբական խալիֆաթի տիրապետության շրջանում շարժումների մեծ մասի համար որպես հարուցիչ է ներկայանում ինքը՝ խալիֆաթը: Բողոքն ու ընդվզումը նրա դեմ ծնվել են նրա հետ մեկտեղ. առաջին չորս խալիֆներից երեքը սպանվել են ընդդիմության կողմից:[37] Խալիֆաթի գրաված տարածքներում իսլամի տարածումն իրականացվել է ոչ միևնույն հաջողությամբ և հենց ի սկզբանե հանդիպել է ընդդիմադիր ուժերի: Հակաիսլամական պայքարի (կրոնական աղանդներ) հետ գրեթե միաժամանակ սկիզբ է սանում և դասակարգային պայքարը: 7-րդ դ.՝ խալիֆաթի կազմավորման արշալույսին արդեն գոյություն ուներ ընդդիմադիր կազմակերպություն, որը պայքարում էր հանուն շարքային մահմեդականների շահերի՝ նվաճումներով ուռճացած արիստոկրատիայի դեմ: Ի դեպ, դասակարգային պայքարն արտացոլվել է հենց հադիսներում[38], այսինքն՝ իսլամի գաղափարախոսության մեջ և գնալով ավելի խորացող հակաֆեոդալական շարժումներում: Խալիֆաթն ստիպված է լինում հարկային զիջումներ անել, դադարեցնել հալածանքները շիաների և այլ ընդդիմադիր խմբերի դեմ: Սակայն դա չէր կարող փրկել դրությունը: Ե՛վ Օմայան վերջին խալիֆ Մրվան II-րդի, և՛ նրան հաջորդած Աբբասյանների օրոք արաբական լուծը նվաճած ժողովուրդների վրա առավել ծանրացավ, մեծ չափերի հասան հարկերը, որոնք ջլատում էին բնակչությանը և ուժ տալիս նրա ընդերքում աճող դժգոհության ու ընդվզումի տարերքին: Չմոռանանք, որ նվաճված ժողովուրդները բազմալեզու, բազմազգ, տարրակրոն հասարակական զանգվածներ էին, որոնք կրելով միևնույն լուծը, գրեթե միատեսակ պայքարի ձևեր էին գտնում՝ միջնադարյան պայմանների բերումով, այն է՝ ապստամբություն այս կամ այն ընդդիմադիր աղանդի դրոշի ներքո: Այս պայմաններում էին գոյանում հայ մահմեդական (նաև ընդհանրապես՝ արևելյան, նաև արևմտաեվրոպական) աղանդավորական շարժումների միջև գաղափարական աղերսները, հանգեցնելով հար և նման ապստամբական պայքարի ձևերի (ընդհուպ մինչև կազմակերպական մանրամասներ):

Խոշոր աղանդավորական շարժումների պատմության մեջ աչքի է զարնում ևս մի օրինաչափություն. շարժումներն իրենց հիմքում ունեցել են ավելի վաղ գոյություն ունեցած շարժումներին հատուկ գաղափարական սկզբունքներ: Օր.՝ 9-11-րդ դդ. ծավալված թոնդրակյան, 7-9-րդ դդ. պավլիկյան շար-

ժումների գաղափարական ակունքները գանում ենք 5-րդ դ. Մարզպանական Հայաստանում հանդես եկած մեսալյանների և նույն ժամանակ Բյուզանդական Հայաստանում տարածում գտած բորբորիտների գաղափարական սկզբունքներում: Նույն երևույթն ակնբախ է մահմեդական աղանդավորական շարժումների պարագայում. ընդ որում, գաղափարական ընդհանրություններ են առկա ոչ միայն ներիսլամական շրջանակներում, այլև վերջիններիս և նախահիսլամական շարժումների միջև. և ըստ այդմ էլ հնարավոր է խոսել գաղափարական սերտ կապի մասին Զրադաշտի, Մանիի, Մազդաքի միջև:

Թեև Ա. Հովհաննիսյանն անընդունելի է համարում նման մոտեցումը, «գենետիկ հաջորդականության» մասին, սակայն իր իսկ բերած օրինակներն ու վերլուծումները նույնն են վկայում: Այսպես, հենց միայն այն փաստը, որ թոնդրակյան աղանդապետ Սմբատ Զարեհավանցին նպատակ էր դրել ի մի բերելու իրենց ստաջ և իր ժամանակի բոլոր աղանդավորական սկզբունքները, այլ խոսքով՝ իբրև իր նոր գաղափարախոսության ակունք օգտագործել անցյալի վարձը, խոսում է հաջորդականության թեզի օգտին: Անշուշտ, հասարակական-քաղաքական կենսապայմանների և դրանցից բխած խնդիրների ընդհանրությունը կարևորագույն պայմաններն իսկ կարող են կրկնվել պատմության ընթացքում, յուրաքանչյուր ժամանակ յուրովի: Խոսելով 4-րդ դ. Փոքր Հայքում աշխատավորական լայն զանգվածների ընդվզման հետևանքների մասին, Լ. Խաչիկյանն ընդգծում է, որ շարժման մշակած առաջավոր գաղափարները յուրացվեցին հայ ժողովրդի հաջորդ սերունդների կողմից:" Կամ՝ «Փոքր Հայքի շարժման գաղափարները այլ սոցիալական պայմաններում ժառանգում ու զարգացնում են նաև նրանց հեռավոր սերունդները»:[41]

Ինչպես նշում է Հ. Բարթիկյանը, պավլիկյան շարժման գաղափարախոսությունը մի ժամանակաշրջանի արգասիք չէր, և շատ բան նրա մեջ մուտք է գործել նախորդած աղանդավորական շարժումներից:[42] Օրինակները և հավաստիացումները մեծաթիվ են:

Ուրեմն, աղանդավորական շարժումների մեջ գաղափարական հաջորդականությունն ակնբախ է և հավաստվում է պատմությամբ:

Վերը դիտարկված և բազում այլ շարժումների բնույթը, իբրև կրոնական քողի տակ ընթացող դասակարգային պայքարի ձև միջնադրում, գալիս է փաստելու այն իրողությունը, որ կրոնական դրոշը, Էնգելսի արտահայտությամբ, ամենևին չի փոխում գործի էությունը, և դասակարգային շահերը հեշտությամբ բացատրվում են ժամանակի պայմաններով:

Ուստի միանգամայն տրամաբանական ենք գտնում, որ չնայած բոլոր ժամանակներում աղանդների շատ ցածր վարկանիշին, պատմագիտության մեջ միջնադարյան աղանդավորական-ապստամբական շարժումներին տրվում է «հեղափոխական» մակդիրը (ըստ Ա. Հովհաննիսյանի՝ «ռևոլյուցիոն օսրոզիցիա»): Իհարկե, բանն այն չէ, որ աղանդները եկեղեցու դավա-

նական հայացքներից խոտորվելով, մերժում են եկեղեցու միջամտությունը հավատքի գործերում. սա ոչ «հեղափոխական ընդդիմություն» չէ: Այլ է, երբ կրոնական միստիկան և դավանաբանական խնդիրները կապվում են հակաֆեոդալական գործողությունների հետ, վերաճում ազգագրական շարժման: Այստեղ արդեն վերջինս ստանում է առաջադիմական նշանակություն և հենց այդպես էլ որակվում՝ «պրոգրեսիվ»: Ըստ Ս. Սելիք-Բախշյանի Միջնադարյան Հայաստանում աղանդավորական շարժումները ճնշված ու շահագործվող դասակարգերի մասնակցությամբ դառնում էին հեղափոխական-սոցիալական շարժումներ ուղղված ֆեոդալական հասարակարգի դեմ»:[43]

Սակայն, ոչ բոլոր պատմաբանների կողմից է դա նկատված: Քննադատական խոսք ուղղելով պատմաբան Լեոյին՝ աղանդավորական շարժմանն իդեալիստական դիրքերից տված գնահատականի և ոչ գիտական մոտեցման համար, Լ. Խաչիկյանը գրում է, որ նա «չի կարողացել արժանի գնահատական տալ մծղնյաների պրոգրեսիվ (ընդգծումը մերն է - Լ. Դ.) շարժմանը»:[44]

Դիտարկենք նույն հարցը պարսից պատմագիտության մեջ: Իրանի հմուտ պատմաբաններից Էհսան Թաբարին, որն ընդարձակ աշխատություն է նվիրել Իրանի հասարակական շարժումներին[45], խոսելով միջնադարյան մի շարք աղանդների և ժողովրդական շարժումների մասին (ինչպես՝ գինոցների, իսլամականների, դերվիշական շարժումների, «հոռուֆիյե» կոչված աղանդի, բարիների ևն), դրանք դիտում է որպես ազատագրական շարժումներ, որոնց հիմքում ընկած էին նաև այլ կողմեր, ամենից առաջ՝ գաղափարական-բարոյական: Պատահական չէ, որ մազդաքյան շարժմանը վերաբերող գլուխը նա սկսում է Շեյխի Մոհամմեդ Խիաբանիի և Ֆիրդուսո խոսքերից ընտրած բնաբաններով, որոնք ընդգծում են Իրանի ժողովրդի ազատատենչ ոգին: Այսպիսով, պարսից պատմագիտության ներկայացուցիչը ևս աղանդավորական-ապստամբական շարժումների մեջ տեսնում է տնտեսական խթան և ազատագրական գաղափարի դրսևորում, համարելով դրանք պրոգրեսիվ:[46]

Այսպիսով հայ և մահմեդական միջնադարյան աղանդավորական շարժումների միջև գաղափարական աղերսներն ակնհայտ են և արդյունք են տնտեսական ու քաղաքական միևնույն կամ նման կենսապայմանների առկայության, նաև՝ հետապնդած նպատակների միասնության, իբրև ընդհանրություններ հակաֆեոդալական, ազատագրական շարժումներում և շահագործման, հարստահարման, ճնշումների դեմ պայքարի ձևերում:

Հարկ ենք համարում անվերապահորեն ընդգծել, որ այս կամ այն աղանդավորական դրոշի ներքո ծավալված միջնադարյան հակաֆեոդալական ապստամբություններին տրված հիշյալ գնահատականն ամենևին չի վերաբերվում ներկայիս աղանդավորական զանազան խմբերի ու հոսանքների գործունեությանը (ինչպես՝ քրիշնայականներ, Եհովայի վկաներ ևն): Պատ-

մությանը քաջ հայանի են նման աղանդավորական քարոզչության հեռուներ նպատակները, ներառյալ լատինադավան միսիոներական տարբեր կազմակերպությունների (օր.՝ կարմելիտների) ծավալած փութաջան գործունեությունը՝ իրենից ցանցը ներքաշելու այլակրոն ժողովուրդների, այդ թվում և՝ հայերին: Միջնադարյան դժնդակ պայմաններում հայերը նույնիսկ օտար ափերում համառ պայքար են տարել կրոնափոխության դեմ, արժանանալով այսպիսի գնահատականի. «Հայերն իրենց կրոնի նկատմամբ այնքան մոլեռանդ ու հավատարիմ են, որ նրանց մոտ այլ կրոնի մասին խոսել չի լինի» (Թավերնյե):[47] Արդ, մեր հասարակությունը չպետք է տրվի բոլոր տեսակի աղանդավորական քարոզներին և մազաչափ անգամ չպետք է խոտորվի հայ առաքելական եկեղեցու դարավոր սկզբունքներից:

SUMMARY

The medieval sectant-liberatory movements were in fact consequences of social struggle, their demands limited to social-economic and juridical ones. The study of these movements show a considerable number of similarities between Christian and Muslim sectant movements. Such movements as Paulician, Thondrakian, Mesalian, Mekhlu, Babek, Mukanna, Abu Muslim etc., mostly were based on one and the same ideological ground - dualism, denial of rich life, equality of sexes.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ս. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, էջ 232:

2. Այս ասպարեզում ուշագրավ են՝ Ե. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, Հ. Բարթիկյան, Աղանդավորական շարժումները Հայաստանում ըստ միջնադարի հայ և օտար հեղինակների (4-5-րդ դդ.) (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1984,թ. 10), Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (4-րդ դ.), Երևան, 1951, Կ. Տեր-Մկրտչյան, Պավլիկյանք Բյուզանդական կայսրության մեջ և մերձավոր հիրձվածային երևույթներ Հայաստանի մեջ, Երոսադեմ, 1938, Ս. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևանում, 1953, Е. Беляев, Мусульманское сектантство, М., 1957; Я. Ленцман, Происхождение христианства, М., 1960; М. Томара, Бабек, М., 1936 են:

3. M. Томара, անդ, էջ 31:

4. Այսպես, մազդաքյանների պարտությունից հետո աղանդի երեք հազար հետևորդների դաժան խոշտանգումների ենթարկելով սպանեցին: Եվ քանի որ այդ խոշտանգումները հար և նման էին միջոցներին, որոնցով տանջամահ էին արվել մանիքեականները, վերջին անվանումը վերագրվում էր նաև մազդաքյաններին:

5. «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատեա», հ. I, Երևան, 1981, էջ 735:

6. Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. I, Երևան, 1957, էջ 365:

7. Անդ:

8. 17-րդ դ. պատմիչ Զաքարիա Սարկավագը (Քանաքեռցի) իր «Պատմագրութեան» մեջ այս շարժման նկարագրությանն առանձին գլուխ է հատկացրել «Դիպուածք չարաց ի սորա ժամանկի»: Լինելով հոգևորական, պատմիչն առավել ցավագին էր ընկալում հակաեկեղեցական ելույթները, ոտի իր գրչի ողջ կարողությամբ ջանում էր նշավակել Մեխլու կոչված աղանդապետի և՛ գաղափարն ու գործը, և՛ անձը (տես - Զաքարիա Սարկավագ, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, հ. 1, էջ 47-53):

9. Օր. 15-րդ դ. 40-ական թթ. Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի կողմից սահմանվեցին կանոններ, որոնցով, իբր, պիտի կանխվեր կրոնավորների բարոյալքումը: Հաղորդելով այդ մասին, Ա. Հովհաննիսյանն իրավամբ նկատում է, որ դրանով հագիվ թե որևէ բան փոխվեց (տե՛ս Ա. Հովհաննիսյան, անդ, էջ 467-468):

10. Թուրքերն այդ աղանդապետին հորջորջում էին Մեխլու-բաբա (Զաքարիա Սարկավագի երկի հրատարակչի բացատրությամբ՝ «բևեռավոր հայր»), իսկ հայրը՝ Մեխլու վարդապետ: Այս անունը տարբեր մեկնաբանումներ է ստացել, կապվելով «մեխ» կամ «տեգ» բառերի հետ:

11. Հագիվ թե Զաքարիային հայտնի չէր Մեխլուի իսկական անունը, բայց նրա մասին ամբողջ պատումի ընթացքում աղանդավորի դեմ զայրույթով լցված պատմիչը ոչ մի անգամ չի հիշատակում նրա անունը, բավարարվելով մականվամբ և սկզբում «այր մի» արտահայտությամբ: Ի դեպ, Ա. Առաքելյանը Մեխլուին թյուրիմացաբար կոչում է Աղվան, ելնելով Զաքարիա Մարկավագի «այր մի ազգաւ Աղուան» արտահայտությունից (տե՛ս Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1964, էջ 562-563):

12. Զաքարիա Սարկավագ, անդ, էջ 49:

13. Անդ:

14. Տե՛ս П. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, с. 124.

15. Տե՛ս Ա. Հովհաննիսյան, անդ, էջ 475:

16. Տե՛ս Г. Ибрагимов, Крестьянские восстания в Турции в XV-XVII вв. ("Византийский временник",VII, с. 134) (բերվում է ըստ Ա. Հովհաննիսյանի):

17. Մուքաննա՝ արաբերեն նշանակում է քողով ծածկված: Մերվի բնակիչ արհեստավոր Հաշիմ իբն Հաքիմն այս մականվամբ հանդես էր գալիս իբրև ապստամբության ղեկավար:

18. Ա. Հովհաննիսյան, անդ, էջ 356:

19. Ե. Տեր-Մինասյան, անդ, էջ 109:

20. Տե՛ս անդ, էջ 92:

21. Շարժման հիմնադիրը՝ Մանին, ծնվել է մոտ 215թ. Բաբելոնում, իսկ քարոզչական գործունեությունն սկսել Քտեսիֆոնում 242 թ. (տե՛ս «Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն», Երևան, 1973, էջ 104):

22. Անդ, էջ 105:

23. Адам Мец, Мусульманский ренессанс, М., 1973, с. 250.

24. Անդ, էջ 151:

25. Իմա՝ երկու արմատ ունեցող, դուալիստ:

26. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1970, «Հայ ժողովրդի պատմության քրիստոնատիա», էջ 823:

27. Ե. Տեր- Սինասյան, անդ, էջ 92:

28. Պավլիկյան շարժման վերաբերյալ առկա են մեծաթիվ հետազոտություններ, որոնց թվում՝ Հ. Բարթիկյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում 7-9-րդ դդ. («Հայ ժողովրդի պատմություն», հ. II Երևան, 1984, էջ 389-415), որտեղ բերված է շարժման մասին Անրի Գրեգուարի, Հ. Բարթիկյանի, Է. Լիպշիցի, Ն. Գարոսյանի, Ե. Տեր-Սինասյանի և այլոց ուսումնասիրությունների թվարկումը:

29. Հ. Բարթիկյանն այդ հանգամանքը բացատրում է պավլիկյան աղանդավորների դասակարգային և էթնիկական բազմազանությամբ, որը պատճառ էր դարձել շարժման ներսում երբեմն գլուխ բարձրացնող տարաձայնությունների և ընդհանուր գաղափարախոսության մեջ տարբեր հոսանքների առաջացման (տես «Հայ ժողովրդի պատմություն», էջ 399):

30. Պավլիկյան շարժման գաղափարախոսության հանգամանալի դիտարկումը տե՛ս Հ. Բարթիկյան, Պավլիկյան շարժման գաղափարախոսությունը («Լրաբեր» հաս. գիտ., 1979, թ. 8):

31. Այդ մասին Հ. Բարթիկյանը նշում է. «Հոգևորականները զբաղված էին գործատներ պահելով, վաշխառությամբ, նրանք քահանա կամ նույնիսկ եպիսկոպոս էին ձեռնադրում, հաղորդություն էին տալիս դրանով, մասնակցում թատերական ներկայացումներին կամ ձիարշավներին և այլն» («Հայ ժողովրդի պատմություն», էջ 390):

32. Տե՛ս Ա. Հովհաննիսյան, անդ, էջ 357:

33. Քառամյաններ կամ խուռամիներ՝ պարս. (Խուրամի) բառից, որը նշանակում է ուրախություն, զվարթություն, կենսուրախություն: Այս աղանդավորները մաքրակենցաղ էին, գիր ու գրականություն սիրող, իսլամի սկզբունքներին ընդդիմացող:

34. Е. Беляев, անդ, էջ 12:

35. Լ. Խաչիկյան, անդ, էջ 51:

36. 685 թ. Քուֆայում շիիզմի դրոշի տակ սկսված ապստամբությանը մասնակցում էին արաբները և պարսիկները, որոնք հարձակվում էին տեղի մեծահարուստների վրա: Նրանց նույնիսկ հաջողվեց որոշ ժամանակով գրավել Քուֆան:

37. Е. Беляев, անդ, էջ 17-18:

38. Հաղիսներ՝ իմա մոսուլմանական ավանդության՝ սուննայի, բաղկացուցիչ մասեր:

39. Ա. Հովհաննիսյան, անդ էջ 355:

40. Տե՛ս Լ. Խաչիկյան, անդ, էջ 83:

41. Անդ, էջ 82:

42. Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», էջ 398-399:

43. Ա. Սելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, էջ 232:

44. Լ. Խաչիկյան, անդ, էջ 74:

45. Էհսան Թաբարի, Հետազոտություն որոշ հասարակական շարժումների և գաղափարախոսությունների մասին Իրանում, Թեհրան, 1348 (եջրի), 406 էջ (պարսկերեն):

46. Անդ, էջ 240. Թաբարին իր միտքն ապացուցում է մոտավորապես «հուտուֆիյե» աղանդի օրինակով:

47. Ֆրանսիացի աշխարհաշրջիկ և վաճառական Ժան Բափթիսթ Թավերնյեն սկսած 17-րդ դ. 30-ական թթ. երկար տարիներ եղել է Իրանում և իր տպավորությունները ամփոփել «ճամփորդագրքում»: Մենք օգտվել ենք գրքի պարսկերեն թարգմանությունից (Թավերնեյ, ճամփորդագիրք, Թեհրան, 1321 (հեջրի), էջ 81):